ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

Ե. Խալեյան

ԲԱԹՈՒՄԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Համաերոպական տնտեսական ճգնաժամի պայմաններում Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ սկսված գործադուլային բանվորական շարժումները 20-րդ դարի սկզբից բացարձակ քաղաքական պայքարի ընույթ ընդունեցին՝ ուղղված ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ։

Այդ շարժումներն ամենաջերմ արձագանք գտան նաև Անդրկովկասում, որտեղ անցյալ դարի 90-ական թվականների կեսերից բազմազգ պրոլետարիատի գլուխն էր կանգնել և նրա պայքարը ղեկավարում էր Լենինի հավատարիմ աշակերտ և զինակից, Անդրկովկասի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադիր Ի. Վ. Ստալինը։

1898—1901 թվականները շրջադարձային ժամանակաշրջան հանդիսացան Անդրկովկասի բանվորական շարժման, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պատմության մեջ. 1898—1900 թթ. ընկեր Ստալինը իր մարտական զինակիցներ Ս. Ծուլուկիձեի և Լ. Կեցխովելու հետ միասին համառ պայքար մղելով օպորտունիզմի դեմ, հիմք դրեց Անդրկովկասում ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը, ձևավորեց Թիֆլիսի պարտիական կազմակերպության ղեկավար կենտրոնական խումբը, որը հսկայական ռևոլուցիոն պրոպագանդիստական և կազմակերպական աշխատանք ծավալեց անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ, կազմակերպեց ու գլխավորեց Թիֆլիսի պրոլետարիատի հուժկու գործադուլները, ինքնակալության դեմ ուղղված քաղաքական ցույցերը։

Այդպիսով, ընկեր Ստալինի գլխավորությամբ Կովկասում ևս սկսում է «կենսագործվել սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ ճիշտ այնպես, ինչպես այդ մի քանի տարի առաջ փայլուն կերպով իրականացնում էր Լենինի ղեկավարած պետերբուրգյան «Պայքարի միություն»-ը»[1]։

1901 թ. ընթացքում ընկեր Ստալինի գլխավորությամբ կազմակերպվում և ձևակերպվում են Թիֆլիսի ու Բաքվի լենինյան-իսկրայական կազմակերպությունների սոցիալ-դեմոկրատական կոմիտեները։ 1901 թ. նոյեմբերի վերջին Թիֆլիսի կոմիտեն, որ մինչև Կովկասյան Միութենական կոմիտեի ստեղծումը փաստորեն Անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավար կենտրոնի դեր էր կատարում, ընկեր Ստալինին գործուղում է Բաքու՝ անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու համար։

---

[1] «Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին», համառոտ կենսագրություն, Հայպետհրատ, 1949 թ., էջ 15։

Բաքվից և Թիֆլիսից հետո Բախումը Անդրկովկասի արդյունաբերական և պրոլետարական երրորդ խոշոր կենտրոնն էր։ Բախում էին գալիս Ռուսաստանի տարբեր նահանգներից, ինչպես նաև Վրաստանից, Հայաստանից, Ադրբեջանից և մյուս վայրերից տասնյակ հազարավոր հողազուրկ գյուղացիներ՝ աշխատանք որոնելու, օրվա ապրուստ հայթայթելու համար։

1901 թվականին Բախումի բանվորների քանակը արդեն հասնում էր մոտ 11 հազար մարդու։ Վերին աստիճանի ծանր էր նրանց դրությունը։ Բանվորները տնտեսական-քաղաքական դաժան շահագործման էին ենթարկվում տեղական և օտարերկրյա կապիտալիստների, ինչպես նաև ազգային հալածանքների էին ենթարկվում ցարական ինքնակալության կողմից։ Նրանք աշխատում էին օրական 12—14 ժամ, պարտադիր արտաժամյա աշխատանքներն էլ հաշված՝ 16—17 ժամ։ Լայնորեն գործադրվում էին տուգանքները, փոքրահասակների աշխատանքը։ Չկար կյանքի ապահովագրություն, բանվորները աշխատանքի ժամանակ մեքենայի տակ ընկնելով կորցնում էին իրենց ձեռքը կամ ոտքը, գործարանի ադմինիստրացիան այդ դեպքը ձևակերպում էր բանվորի անզգուշության արդյունք և տուժվողին դուրս էր շպրտում աշխատանքից։

Ավելի անտանելի էին բանվորների բնակարանային ու կենցաղային պայմանները։ Կիսաքաղց կյանքի հետ միասին նրանք իրենց ընտանիքներով ապրում էին քաղաքի ճահճոտ, խոնավ ու մոծակներով լի ծայրամասերում շինված հակասանիտարական խրճիթներում կամ հանրակացարաններում։

Այս անտանելի շահագործումն ու զրկանքները բանվորների մեջ ատելություն էին հրահրում դեպի գործարանատերերը, դեպի գոյություն ունեցող պետական դաժան կարգը։

1902 թվականին լենինյան «Իսկրա»-յում տպագրվեց Բախումի բանվորներից մեկի նամակը, որը նկարագրելով գործարաններում տիրող ծանր դրությունը, բանվորների անտանելի շահագործումը, նշում էր. «Ծանր է այսպես ապրելը, և ակամայից հարց է ծագում՝ ինչու՞ ենք մենք այսպես տառապում. մեր կյանքը զուրկ է ամեն մի ուրախությունից, նա միայն համատարած ճանսպարհ է դեպի գերեզման։ Ուրեմն ավելի լավ չէ՞ դազգահի առաջ ստրուկի նման մեռնելու փոխարեն, մեռնել ազատության պայքարի համար, լավագույն ապագայի համար...»[1]։

Մինչև ընկեր Ստալինի Բախում գալը այդտեղ չեկար ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, բանվորների մեջ ոչ մի ռևոլուցիոն աշխատանք չէր տարվում։

Բախում հասնելով, ընկեր Ստալինը կապվում է առաջավոր բանվորների հետ և շատ կարճ ժամանակամիջոցում գործարաններում ստեղծում է ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական 11 խմբակ, որոնք ընդգրկում էին Մանթաշևի, Ռոտշիլդի, Սիդիրիդիսի և մյուս գործարանների բանվորներին։ Ընկեր Ստալինը սիստեմատիկաբար պարապմունքներ էր անցկացնում խմբակներում, մերկացնում էր Բախումում բուն դրած «Մեսամեդասիի» մեծամասնության խմբի անդամների, լեգալ մարքսիստների օպորտունիստական գործունեությունը, բանվորներին բացատրում էր իրենց

[1] «Իսկրա» № 16, 1902 թ.։

թշվառության և աղքատության պատճառը, պարկարանում պրոլետարիատի պատմական դերը ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ քաղաքական պայքար մղելու, սոցիալիստական կարգեր ստեղծելու գործում։

«Ընկեր Ստալինը ամուր կերպով կապված էր բանվորական մասսաների հետ և մանրամասն գիտեր բանվորների կյանքը – գրում է իր հուշերում Ռոտշիլդի գործարանի բանվոր, մարքսիստական խմբակի անդամ Օսման Գուրգենիձեն։—Նա, այն բոլորը, ինչ որ բացատրում էր, սերտորեն կապում էր բանվորների կյանքի կոնկրետ փաստերի հետ և այդ պատճառով նրա ճառերը մեզ համար այդքան հասկանալի էին դառնում»[1]։

Առաջավոր բանվորների օգնությամբ ընկեր Ստալինը ձեռնարկում է նաև փոքրիկ անլեգալ տպարան ստեղծելու աշխատանքը, այդ մասին Բաթումի տպագրիչ հին բանվորներից Ս. Թոդրիան, որը մինչև ընկեր Ստալինին հանդիպելը հաճախում էր «Մեսամեդասականների» կիրակնօրյա դպրոցը, պատմում է հետևյալը. «Մի անգամ ընկեր Ստալինը հարցրեց ինձ. «Ի՞նչ են սովորեցնում ձեզ կիրակնօրյա դպրոցում» և երբ ես նրան ասացի, որ այնտեղ սովորեցնում են, թե ինչպես է շարժվում արեգակը, նա ժպտալով պատասխանեց.

— Լսիր—մի վախենա, արեգակն իր ուղուց չի շեղվի: Այլ դու սովորիր, թե ինչպես պետք է շարժվի ռևոլուցիայի գործը, և օգնիր ինձ մի փոքրիկ անլեգալ տպարան սարքելու գործում:

Ստալինի այդ հանձնարարությունը կատարվեց»[2]։

Այսպես, ընկեր Ստալինը օրեց-օր ուժեղացնում էր իր կազմակերպած սոցիալ-դեմոկրատական խմբակների ազդեցությունը բանվորների վրա, ընդլայնում էր խմբակների գործունեությունը, ընդհատակյա ռևոլուցիոն աշխատանքի մեջ էր ընդգրկում բանվորների նորանոր խմբեր, վրացի, հայ, ռուս առաջավոր բանվորներից աճեցնում էր փորձված կազմակերպիչներ և ագիտատորներ, նրանց տալիս էր կոնկրետ հանձնարարություններ, աշխատում էր սոցիալ-դեմոկրատական խմբակների ղեկավարությունը Բաթումի քաղաքային մեկ կենտրոնի մեջ միավորել։

Ցարական պահնորդական բաժանմունքը Բաթումում ընկեր Ստալինի տարած այդ աշխատանքների մասին հայտնում է հետևյալ տեղեկությունները. «Սոցիալ դեմոկրատական շարժման զարգացումը մեծ հաջողություններ ձեռք բերեց, երբ 1901 թվականի աշնան «ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն» իր անդամներից մեկին՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ջուղաշվիլուն Բաթում գործուղեց՝ գործարանային բանվորների մեջ պրոպագանդա մղելու համար: ... Ջուղաշվիլու գործունեության շնորհիվ ... շուտով Բաթումի բոլոր գործարաններում սկսեցին առաջ գալ սոցիալ դեմոկրատական կազմակերպություններ»[3]։

1901 թ. դեկտեմբերի 31-ին (նոր տոմարով 1902 թ. հունվարի 13-ին) ընկեր Ստալինը հրավիրում է Բաթումի սոցիալ-դեմոկրատական խմբակների ներկայացուցիչների անլեգալ կոնֆերանս, որին մասնակցում են 25—30 մարդ։ Պահնորդական բաժնի հետապնդումից խույս տալու նպատակով, կոնֆերանսը կազմակերպվում է նոր տարին դիմավորելու անվան

---

[1] „Батумская демонстрация 1902 года". Партиздат ЦК ВКП(б), 1937 г., стр. 114.

[2] «Մեծ առաջնորդը և ուսուցիչը», Հայկուսհրատ, 1936 թ., էջ 11։

[3] „Батумская демонстрация 1902 года", стр. 187, ընդգծումը մերն է—Ե. Խ.։

տակ, ժանդարմերիայի աչքից հեռու՝ Ռոստովի գործարանի բանվոր Սիլվեստր Լոմջարիայի բնակարանում։

Այդ կոնֆերանսում ընկեր Ստալինը, որին Բաքումի բանվորները արդեն այդ ժամանակ «բանվորների ուսուցիչ» էին անվանում, 4—5 անգամ կրակոտ ելույթ է ունենում, նվիրված ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիայի և պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրներին։

Այդ պատմական գիշերը ընկեր Ստալինի գլխավորությամբ ձևավորվում է Բաքումի ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը և նրա ղեկավար պարտիական խումբը, որը Բաքումի ՌՍԴԲԿ Լենինյան իսկրայական ուղղության կոմիտեի դեր է կատարում։ Այդ ժամանակ Բաքումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ էին մտնում առաջավոր բանվորներ՝ Ս. Լոմջարիան, Ի. Դորախվելիձեն, Ս. Թոդրիան, Ա. Ղազարյանը, Մ. Գաբունիան, Պ. Լոմջարիան, Պ. Գոգոբերիձեն, Վ. Կալանտաձեն, Օ. Գուրգենիձեն, Ն. Կերտաձեն, Պ. Կուրիձեն և ուրիշները։

Կոնֆերանսի աշխատանքները տևում են մինչև լուսաբաց, «... Երբ արշալույսի վարդագույն շողերը թափանցեցին լուսամուտից ներս,—վերհիշում է Պ. Կուրիձեն,—Ստալինն ասաց՝

—Ահա և լուսաբացը։ Շուտով արևը կծագի։ Այդ արևը կփայլի մեզ համար»[1]։

Բաքումի պարտիական կազմակերպության ձևավորումից հետո պրոլետարիատի գործադուլներն ու ռևոլուցիոն ելույթները ընկեր Ստալինի գլխավորությամբ ընդունում են կազմակերպված բացարձակ քաղաքական պայքարի բնույթ։ Այդ գործում վճռական դեր կատարեց ընկեր Ստալինի գլխավորությամբ բազմազգ բանվորների ինտերնացիոնալ դաստիարակությունը, նացիոնալիզմի դեմ մղված համառ պայքարը։

Ինչպես հայտնի է, դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից ընկեր Ստալինի Անդրկովկասում ստեղծված սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն արդեն խիստ ինտերնացիոնալ բնույթ ունեին։ «Թշնամիների դեմ համերաշխ պայքար մղող վրացի, ռուս, հայ և մուսուլման բանվորների միասնական կազմակերպություն,—գրում է ընկեր Ստալինը,—այս էր պարտիական կյանքի պատկերը... Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան աճել է նացիոնալիզմի դեմ մղած պայքարում»[2]։

Ընկեր Ստալինը Բաքումում ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն հիմնելու առաջին իսկ օրերից, մերկացնելով լեգալ մարքսիստներին, օպորտունիստներին, միաժամանակ համառ պայքար մղեց մեծապետական շովինիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ, որոնք լուրջ դժվարություններ էին հարուցում և խանգարում էին Բաքումի պրոլետարիատի պայքարի կազմակերպմանը, սոցիալ-դեմոկրատական աշխատանքների ծավալմանը։

Համառ էր այդ պայքարը։ Ցարական մեծապետական շովինիստները, գործարանատերերը, բուրժուական և մանր բուրժուական նացիոնալիստներն իրենց դասակարգային տիրապետությունը կանգուն պահելու համար,

---

[1] „Рассказы старых рабочих закавказья о великом Сталине", 1937 г., стр. 64

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 2-րդ, էջ 335 և 336։

օգտագործելով բանվորների ազգային կազմի բազմազանությունը, բոլոր միջոցներով խունավորում էին աշխատավորների գիտակցությունը, մեկ ազգությանը գրգռում էին մյուսի դեմ, ձգտում էին բանվորներին պառակտել ըստ ազգային հատկանիշների և այդպիսով խափանել պրոլետարիատի դասակարգային միասնությունը, ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղվող ռևոլուցիոն պայքարը։

Ահա այսպիսի իրադրության պայմաններում ընկեր Ստալինը դիմում է կոնկրետ միջոցառումների։ Նա իր ստեղծած սոցիալ-դեմոկրատական խմբակներում ընդգրկում է տարբեր ազգություններին պատկանող առաջավոր շատ բանվորների, նրանցից աճեցնում է հմուտ կազմակերպիչներ ու պրոպագանդիստներ, հանգամանորեն մերկացնում և ջախջախիչ հարվածներ է հասցնում մեծապետական շովինիզմին, բուրժուական նացիոնալիստներին։ Նա Բաքվի բազմազգ բանվորներին դաստիարակում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, միասնության և եղբայրական համերաշխության ոգով։

Այդ աշխատանքը շատ շուտով տվեց իր բեղմնավոր արդյունքը։ 1902 թ. աննախընթաց վերելք ապրեց Բաքվի պրոլետարիատի ռևոլուցիոն պայքարը, որի մեջ հրաշալի կերպով դրսևորվեց բազմազգ բանվորների միասնության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան-ստալինյան գաղափարների հաղթանակը։

Բաքվում այդ ժամանակ բանվորական շարժման դեմ ամենաստոր դավեր էին լարում պրոլետարիատի ոխերիմ թշնամի դաշնակները և հնչակյանները։ Նրանք աշխատում էին իրենց ազդեցությունը տարածել Բաքվի հայ բանվորների վրա, որոնք վրացի բանվորներից հետո Բաքվի պրոլետարիատի շարքերում արդեն մի պատկառելի թիվ էին կազմում։ Դրանք Անդրկովկասի տարբեր մասերից եկած, ինչպես նաև թյուրքական արյունարբու սուլթան Համիդի կողմից 1894—1896 թվականին կազմակերպված հերթական կոտորածից ճողոպրած գյուղացիներն էին, բոլորն էլ շահագործումից ու հալածանքներից ծեծկված ու անօգնական։ Ծառայության մտնելով Բաքվի գործարաններում որպես բանվորներ և նավահանգստում՝ որպես բեռնակիրներ, նրանք հենց սկզբից եղբայրական կարեկցություն և օգնություն գտան վրացի և ռուս բանվորների, իրենց բախտակից ընկերների կողմից։ Դրան հակառակ՝ դաշնակները և հնչակյանները նացիոնալիստական անտագոնիստական գաղափարներ սերմանելով, աշխատում էին խանգարել հայ բանվորների դասակարգային ինքնագիտակցության աճումը, ձգտում էին հեռու պահել սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից, գործադուլներից ու ռևոլուցիոն պայքարից։

Այս բոլորը ճարպկորեն օգտագործում էին Բաքվի գործարանատերերը, նրանց թվում հայ խոշոր կապիտալիստ Մանթաշևը։ Մանթաշևը բանվորների ինտերնացիոնալ միասնությունը ջլատելու և մեծ շահույթներ ձեռք բերելու նպատակով իր գործարանում ընդունում էր մեծ թվով հայերի։ «Բարերարի» կեղծ քողի տակ թաքնվելով՝ նա խարեբայությամբ անօգնական բանվորներին վարձում էր կրկնակի պակաս օրավարձով, և ոգրուկի նման ծծում էր նրանց արյունը։

1900 թվականից Մանթաշևի գործարանում աշխատող զարոյշչիկ բանվոր, Նոր Բայազետի Փաշարենդ գյուղի բնակիչ Իվան Սարգսյանը Բաթումում իրենց անցկացրած թշվառ կյանքի մասին պատմում է հետևյալը. «Օրական աշխատում էինք 14 ժամ և ստանում էինք 45 կոպեկ աշխատավարձ։ ... Մեկ փոքրիկ սենյակում ապրում էինք 10—15 հոգի։ Միևնույն թախտի վրա 2—3 հոգի էինք քնում։ Կիսաքաղց կյանք էինք անցկացնում։ Շաբաթը մեկ անգամ 5 հոգով գնում էինք 400 գր միս, սպիտակ գուլում լոբով շորվա էինք եփում, մի կերպ քարշ էինք գալիս, միշտ կարոտ կուշտ ուտելուն և ազատ կյանքին ... Ամենաչնչին «սխալի» համար տուգանում էին և ծեծում մեզ, օրինակ, սոսկալի տանջող էր Մանթաշևի գործարանի ավագ պրիկաշչիկ Ջումշուդը (դարբաղցի). Ջումշուդը մի անգամ բանվոր Սիրեկան Կոյանին այնպես ծեծեց, որ բոլոր ատամները կոտրվեցին և լցվեցին բերանը։ Ծեծը շատ էր տարածված գործարանում, դրանից բանվորները զայրանում էին և վրեժխնդիր էին ուզում լինել»[1]։

Հենց սկզբից, ընկեր Ստալինի գլխավորությամբ Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավար խումբը հատուկ միջոցներ է ձեռք առնում և ուժեղացնում է հայ բանվորների մեջ տարվելիք սոցիալ-դեմոկրատական աշխատանքները։ Ընկեր Ստալինը խնդիր է առաջադրում ամեն կերպ պայքարել և լիկվիդացնել նացիոնալիստների սերմանած հակապրոլետարական գաղափարները, միասնություն ստեղծել հայ բանվորների հետ։ Այս առաջադրանքը ամենաջերմ արձագանք և օգնություն է գտնում Բաթումում կազմակերպված ողջ պրոլետարիատի կողմից։

Բանվորները առաջին անգամ ընկեր Ստալինից լսեցին պրոլետարիատի մարտական պարտիայի ստեղծման, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գրոշի ներքո բանվորների համախմբման և ինքնակալության ու բուրժուազիայի դեմ նրանց քաղաքական պայքարի կազմակերպման անհրաժեշտությունը։ Բաթումի կոմիտեն բանվորների մեջ աշխատանք տանելու համար ուղարկում էր լավագույն առաջավոր բանվոր պրոպագանդիստների, նրանց միջոցով տարածում էր անլեգալ կոչեր ու պրոկլամացիաներ։

Մանթաշևի գործարանում աշխատող բանվոր Աղարեկ Աֆրիկյանն իր հուշերի մեջ տեղեկացնում է, որ իրենց գործարանում ակտիվ ռևոլուցիոն աշխատանքներ էին տանում սոցիալ-դեմոկրատ վրացի առաջավոր բանվորները. «մեզ միշտ հավաքում և բացատրում էին, որ մենք շատ ենք աշխատում խազեիններ համար, բայց նրանք շատ քիչ աշխատավարձ են տալիս մեզ։

... 1902 թ. սոցիալ-դեմոկրատ առաջավոր բանվորներն ինձ մի քանի անգամ թռուցիկներ տվին, ես դրանք տարա և ցրեցի մեքենաների վրա, մի մասն էլ տեղավորում էի մեքենաների արանքում, որպեսզի բանվորներն աշխատելիս վերցնեն ու կարդանա»[2]։

Շնորհիվ այս միջոցառումների՝ շուտով Բաթումի Կոմիտեի շուրջը համախմբված վրացի, ռուս և մյուս ազգությունների առաջավոր բանվորների շարքերում աճում և դաստիարակվում են ռևոլուցիոն շատ հայ բանվորներ։

---

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆոնդ 43, գործ 2, էջ 1—2։
[2] Նույն տեղում, գործ 3, էջ 1։

Այդ առաջավոր բանվորներից էին՝ Խաչիկ Ղազարյանը, Մանուկ Համամջյանը, Գևորգ Գրիգորյանը, Միքայել Խրիմյանցը, Հովակիմ Ինջորարյանը, Ասատուր Բագիրովը և ուրիշները։ Սրանցից ոմանք ընկեր Ստալինի հետ հանդիպումներ էին ունեցել, գեռևս ընկեր Ստալինի Բաթում գալու առաջին իսկ օրերին, ՌՍԴԲՊ Բաթումի Կոմիտեի ստեղծման պատմական կոնֆերանսում, գործադուլների կազմակերպմանը նվիրված խորհրդակցություններում, նույնպես և քաղաքական ցույցերի ժամանակ։ «Մի անգամ (այդ կլիներ 1901 թվականին),—պատմում է Մանթաշևի գործարանի նախկին բանվոր Խաչիկ Ղազարյանը,—մեզ հաղորդեցին, որ Թիֆլիսից եկել է մի ընկեր, ամեն մի ցեխից երկուական մարդ է հրավիրում իր մոտ զրուցելու համար։ Լեռմելու ցեխից ընտրեցին ինձ և Միխայիլ Գարունիային։ Մենք գնացինք Թիֆլիսսկի փողոցի վրա գտնվող Միխայիլ Գարունիայի տունը, որտեղ հավաքվածների մեջ էր գտնվում Թիֆլիսից եկած երիտասարդ ընկերը, որին անվանում էին Սոսո։ Այդ մեր մեծ Ստալինն էր։

Այստեղ մենք առաջին անգամ լսեցինք, որ մեր գրությունը բարելավելու համար, մեզ, բանվորներիս, անհրաժեշտ է ամենից առաջ կազմակերպվել բանվորական պարտիայի մեջ, պայքար մղել ինքնակալության դեմ, տապալել ցարական իշխանությունը և հաստատել դեմոկրատական ռեսպուբլիկա։

Մի քանի ժամանակից հետո, մի կիրակի օր, ընկեր Ստալինը մեզ՝ գործարանների լիազորներիս դարձյալ հավաքեց և ցուցմունք տվեց պայքար սկսել բանվորական օրվա կրճատման համար և բացատրեց, թե ինչպես պետք է այդ գործնականորեն անել»[1]։

1901 թ. դեկտեմբերի վերջերին կամ 1902 թ. հունվարի սկզբին Բաթումում պատահում է մի այսպիսի դեպք. քաղաքային հիվանդանոցում մահանում է Մանթաշևի գործարանում աշխատող գյոքչեցի (այժմ Սևան) մի հայ բանվոր։ Սովորաբար, երբ մահացածը մոտիկ ազգական չէր ունենում, հիվանդանոցի ծառայողները դիակը դնում էին արկղանման մի դագաղի մեջ և սայլակով ուղարկում էին գերեզմանատուն, ննջեցյալին մերկ վիճակում թաղում էին և դագաղը հետ բերում։ Այսպիսի անշուք և անհիշատակ թաղում էր սպասում նաև գյոքչեցի հայ բանվորի համար։

Հայրենիքից հեռու, թշվառ վիճակում մահացած բանվորը չէր թողել ոչ մի կոպեկ դրամական միջոց, սակայն նրա վերջին ցանկությունն էր եղել՝ թաղվել ծննդավայրում։

Ընկեր Ստալինի խորհուրդով վրացի, ռուս և հայ առաջավոր բանվորները իրենց վրա են վերցնում մահացած բանվորի ցանկության կատարման նախաձեռնությունը։ Բանվորներից հանգանակած գումարով նրանք գնում են դագաղ և կազմակերպում են հանդիսավոր հուղարկավորություն, որը փաստորեն դառնում է Բաթումի բանվորների առաջին ցույցը։ «Առաջավոր բանվորներին հետևեցին նաև շարքայիններին,—գրում է այդ մասին Սիդերիդիսի գործարանի նախկին բանվորներից Կուպարաձեն,—ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Մանթաշևի գործարանի բանվորները մյուս գործարանների բանվորներին ևս առաջարկեցին՝ մասնակ-

[1] „Батумская демонстрация 1902 года", стр. 75.

ցելու թաղմանը։ Այնպես որ հուղարկավորության օրը Բաքուի բնակիչները ականատես եղան չտեսնված մի երևույթի։ Քաղաքի փողոցով անցնում էր թվով ավելի քան 1000 հոգուց բաղկացած թաղման թափորը։ Բաքուի փողոցներում խռնված բնակիչները... հետաքրքրությամբ հարցնում էին «այս ումն են թաղումը։ Բանվորները, որոնք նախօրոք նախապատրաստված էին ընկեր Ստալինի կողմից, պատասխանում էին՝ մենք թաղում ենք «աղքատ բանվորին»։ Թափորին անվերջ միանում էին ժողովրդի նորանոր մասսաներ։

Հուղարկավորության թափորը հասավ մինչև երկաթուղու կայարանը, այնուհետև վարձված վագոնով մահացածի դիակը բանվորական պելեգացիան տարավ հայրենիք՝ Հայաստան»[1]։

Այս ցույցը մի հրաշալի դաս հանդիսացավ բանվորների ինտերնացիոնալ դաստիարակության համար, բանվորների դասակարգային գիտակցության և ռևոլուցիոն գործունեության մեջ առաջ բերեց վճռական շրջադարձ։ Բանվորները ճշմարտացիորեն տեսան և գիտակցեցին թե ով է իրենց վշտերի ու թշվառության իսկական կարեկիցը, շահերի պաշտպանը և ով է իրենց թշնամին։

Ընկեր Ստալինի գլխավորությամբ կազմակերպված ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ոտքի հանեցին Բաքուի պրոլետարիատին՝ գործադուլների և քաղաքական ցույցերի։ Այդ պայքարի մեջ ակտիվ մասնակցություն ունեցան վրացի, ռուս բանվորների հետ միասին նաև հազարավոր շարքային հայ բանվորներ։ Դրա ցայտուն ապացույցն է հանդիսանում 1902 թ. հունվարին Բաքուի առաջին և խոշոր գործադուլի կազմակերպումը Մանթաշևի գործարանում և բանվորների հաղթանակը։ Գործադուլը ղեկավարում էր ընկեր Ստալինը։ Մանթաշևի գործարանում այդ ժամանակ աշխատում էին տարբեր ազգությունների պատկանող մոտ 4 հազար բանվորներ, որոնք առաջին անգամ էր, որ կազմակերպված և համերաշխ կերպով ոտքի էին ելնում դասակարգային պայքարի։

Գործադուլի առիթը հանդիսացավ մի խումբ ռևոլուցիոն բանվորների ձերբակալությունը, բայց դա միայն մի առիթ էր. պատճառը ավելի խորն էր։

1902 թ. հունվարի վերջին, կիրակի օրը, ընկեր Ստալինի ցուցումով բանվորները դուրս չեկան աշխատանքի և հանգստացան։ Բանվորներին բոնի կերպով աշխատանքի բերելու ուղղությամբ՝ ադմինիստրացիայի և նրան օգնության հասած ստրաժնիկների բոլոր փորձերը անցան ապարդյուն։ Մյուս օրը, երկուշաբթի, բանվորները հայտարարեցին, որ աշխատելու են միայն մինչև ժամը 6-ը։ Եվ իսկապես՝ ժամը 6-ին բոլոր բանվորները միաժամանակ դադարեցնելով աշխատանքը, ցրվեցին իրենց տները։ Գործարանի՝ ադմինիստրացիան բանվորների միասնությունը կոտրելու համար՝ դիմում է շարեյկրեխերների օգնությանը, բայց այդ ապատասակարգայնացված հատ ու կենտ դավաճանները, հանդիպելով հա-

[1] „Коммунист" (Երևան) № 110, 14 մայիսի 1947 թ.։ (Բաքուի Ռևոլուցիայի թանգարանում ցուցադրված է նկարիչ Նադորեշվիլու «Աղքատ բանվորի» հուղարկավորությունը պատկերող յուղանկարը, որը մեծ հետաքրքրություն է առաջ բերել այցելուների մեջ)։

զարավոր գործադուլավորների ատելությանը և նախատինքին, փախչում են գործարանից։ Այդ ժամանակ վրա է հասնում ոստիկանությունը և հենց նույն օրը ձերբակալում է ևս 30 ակտիվ գործադուլավորների։ Երբ ձերբակալվում էր բանվորներից մեկն ու մեկը, նրա ընկերները, ընկեր Ստալինի խորհրդով խուռն բազմությամբ շրջապատում էին ոստիկաններին և պահանջում, որ իրենց էլ ձերբակալեն։ Այս տակտիկան խիստ թևաթափ էր անում ոստիկանությանը։

Բանվորները, ոգեշնչված առաջին հաջողություններից, գործադուլային Կոմիտեի միջոցով կազմում և գործարանի ադմինիստրացիային են ներկայացնում իրենց պահանջները՝ ազատել ձերբակալվածներին, բարձրացնել աշխատավարձը, տալ շաբաթական մեկ օր հանգիստ, վերացնել տուգանքները, մարդավայել վերաբերմունք ցույց տալ բանվորներին, աշխատանքից հեռացնել բանվորներին ծեծող գործարանի կառավարիչ Տեր-Ակոպովին և այլն։

Գործադուլավորները, նյութական և բարոյական օժանդակություն ստանալով Բաթումի Կոմիտեից, հանդես են բերում համառ կայունություն, որի հետևանքով փետրվարի 18-ին Մանթաշևի գործարանի ադմինիստրացիան ստիպված է լինում նահանջել, ընդունում է բանվորների առաջարկները և գործադուլը ավարտվում է բանվորների հաղթանակով, որը խանդավառում է Բաթումի ողջ պրոլետարիատին։

Բաթումի ոստիկանապետը նահանգապետին գրած իր զեկուցագրի մեջ տեղեկացնում է, որ Մանթաշևի գործարանի բանվորների նման վարքը և հանդգնությունը մինչև այդ տեղի չունեցած երևույթ էր։

Խիստ անհանգստացել էին նաև գաշնակները և հնչակյանները։ Նրանք գլուխները կորցրած ավելի են ուժեղացնում իրենց պրովակացիան, սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից և ռևոլյուցիոն շարժումներից հայ բանվորներին հետ կանգնեցնելու համար։ Նրանք ծեծում են գործադուլավորներին, մատնում են իշխանությանը, անկյունից սպանում են սոցիալ-դեմոկրատ բանվորներին։ Օրինակ, նրանք Մանթաշևի գործարանից սոցիալ-դեմոկրատական խմբի մեջ մտած Ավետիք Թամամյանին գազանաբար տեռորի ենթարկելով, 35 տեղից դաշույնահար են անում։ Բայց զուր էր նացիոնալիստների ճիգերը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարտական ոգին, որով դաստիարակվեցին բանվորները ընկեր Ստալինի ղեկավարությամբ, հաղթանակ տարավ նացիոնալիստների ստոր դավերի դեմ։ Բաթումի բազմազգ բանվորները հանդես եկան միասնաբար։ Հայ բանվորները ոչ միայն մասնակցեցին գործադուլներին, այլև այդ պայքարում իրենց եղբայր ռուս, վրացի ընկերների հետ միասին, նրանց նման հանդես եկան մեծ ակտիվությամբ։ Այդ բանը իրարանցում առաջ բերեց ցարական ոստիկանության և ժանդարմերիայի շրջանում։

1902 թ. փետրվարի 4-ին Բաթումի ժանդարմական վարչությունը իր № 63 գրությամբ Քութայիսի զինվորական նահանգապետին ներկայացրած զեկուցագրի մեջ տեղեկություն հաղորդելով Մանթաշևի գործարանի մի խումբ գործադուլավոր բանվորների մասին, գրում է. «Պատիվ ունիմ հաղորդելու Ձերդ գերազանցությանը, որ Մանթաշևի գործարանում գործադուլին մասնակցած 82 մարդկանց թվից ամենագործարար մասնակցություն են ունեցել 30 մարդ՝ թյուրքահպատակ հայեր, որոնցից 22 մարդ

արդեն ձերբակալված են և ներկայումս գտնվում են բանտում, 8 հոգին նույնպես ենթակա են որոնման և ձերբակալման։

Քանի որ հիշյալ հայերը գործադուլի մեջ կազմում են ամենավտանգավոր տարրերը և նկատի ունենալով այն, որ թյուրքական կառավարությունը նրանց այլևս Թյուրքիա հետ չի ընդունի «.ես խոնարհարար խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ միջնորդություն հարուցել շտապ կարգով նրանց բնակեցնելու որքան հնարավոր է երկրի հեռավոր վայրերում, առավելապես Հյուսիսային Կովկասում, նրանց այնտեղ ոստիկանության հսկողության տակ հանձնելու որպես ոչ բարի դիտավորություններ ունեցող և հասարակական կարգի համար վտանգավոր մարդկանց, գործարանային քաղաքում—ինչպիսին Բաթումն է, ապրելու իրավունք չունեցողներից»։

1902 թվականի փետրվարին ավելի մեծ գործադուլ է սկսվում Ռոտշիլդի գործարանում, մեկը մյուսի ետևից գործադուլներ են ծայր առնում նաև քաղաքի մյուս գործարաններում։

Ցարական ոստիկանությունը խիստ երկյուղ կրելով այդ շարժումների հետագա ծավալումից, դիմում է կանխող միջոցների։ Ռոտշիլդի գործարանից կրճատման պատրվակով փետրվարի 27-ին արձակվում են 398 «անբարեհույս» բանվորներ։ Ի պատասխան այս կարգադրության՝ մյուս օրը 1500 բանվորներ համերաշխ կերպով գործադուլ են հայտարարում։ Մարտի 6-ին կանգ է առնում Ռոշիլդի ամբողջ արդյունաբերությունը, դադարում են նաև Բաթումի նավահանգստի աշխատանքները, նավերի բեռնումը և նավթի արտահանումը արտասահման։

Գործադուլավորները իրենց ներկայացրած տնտեսական և քաղաքական պահանջների մեջ, որը կազմված էր ընկեր Ստալինի գլխավորությամբ գործող գործադուլային Կոմիտեի կողմից, առաջարկում են՝ հետ ընդունել արձակված բանվորներին, բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքային օրվա տևողությունը, շաբաթ օրերի համար սահմանել 8 ժամյա բանվորական օր և այլն։

Այս գեպքերի կապակցությամբ Բաթում է ժամանում Քութայիսի զինվորական գեներալ նահանգապետ Սմագինը և անձամբ բանվորներից բացատրություն է պահանջում։ Զրավարարվելով նրանց բացատրությունից, նա հրամայում է. «Եթե վաղը ևեթ գործի չներկայանաք, այն ժամանակ ձեռք կառնեմ խստագույն միջոցներ»։ Նահանգապետի սպառնալիքները ոչ մի ազդեցություն չեն գործում բանվորների վրա։

Մարտի 4-ին գործադուլի են դուրս գալիս Միդերիդիսի գործարանի բանվորները և պահանջում են աշխատավարձի հավելում։

Քութայիսի նահանգապետի օգնական գնդապետ Դրյագինը նահանգապետին գրած իր տագնապալի զեկուցագրերի մեջ տեղեկացնելով Միդերիդիսի գործարանի բանվորների գործադուլի մասին, նահանգապետին հայտնում է գործադուլավորներին իրենց բնակավայրերը արտաքսելու իր որոշումը. «Միդերիդիսի գործարանում մինչև հունվարի մեկը ժամկետով վարձված բանվորները պահանջ ներկայացրին, որպեսզի Մանթաշևի և Ռոտշիլդի գործարանների օրինակով իրենց բավարարեն վարձատրելով անցյա-

[1] Архив Груз. филиал ИМЭЛ—фонд 31, дел. 24, лис. 18.

լում աշխատած ավելորդ ժամանակի համար։ Գործարանի ադմինիստրացիան մերժեց այդ պահանջը։ Նրանք աշխատանքը դադարեցրին, հայտարարելով, որ նոր բանվորներ վարձելու դեպքում արգելք կհանդիսանան աշխատանքների շարունակմանը։ Բոլոր գործադուլավորները հարյուր քառասուն ինն են, որից ռուսահպատակներ՝ վախսուն, այդ թվում Երևանի հայեր եռեսուն-վեց, տեղական բնակիչներ քսանչորս, օտարերկրացիներ՝ ութսունը ինը, այդ թվում՝ հայեր եռեսուն։ Վաղը բանվորներին կհավաքեմ և կառաջարկեմ երկուշաբթի աշխատանքի անցնել։ Չկատարելու դեպքում անհրաժեշտ է բոլոր գործադուլավորներին արտաքսել հայրենիք։ Խնդրում եմ Ձեր ցուցումները։ Խոստացված ստրաժնիկներն առայժմ չեն եկել, առանց հեծյալ ուժի քաղաքում և Խալոդնայա արվարձանում ու Բարձխանայում անդորրություն պահպանել անհնար է։

Դրյագին»[1]

Մյուս օրը՝ մարտի 8-ի (նոր տոմարով 21) առավոտյան ընկեր Ստալինի գլխավորությամբ Ռոտշիլդի և մյուս գործարանների գործադուլավոր բանվորները մանիֆեստացիա են կազմակերպում, զայրույթով լցված ներկայանում են ոստիկանական վարչություն և տեղեկանում են, որ իրենց ընկերները բանտ են տարված։ Այդտեղից նրանք մեկնում են դեպի բանտը, ճանապարհին երթին միանում են նաև քաղաքի մյուս գործարանների բանվորները և քաղաքացիները։ Հասնելով բանտ, բանվորները պահանջում են անհապաղ արձակել իրենց 32 ընկերներին կամ իրենց էլ բանտարկել։ Ոստիկանությունը և զորքը նախ փորձում են ուժով ցրել ցուցարարներին։ Տեղի է ունենում կարճատև ընդհարում. վիրավորվում է մեկ բանվոր, բայց ոստիկանությունը վախենալով հետագա բարդություններից, պիտում է խորամանկության, ցուցարարների աչքի առաջ բանտարկյալներին բանտից դուրս հանելով փոխադրում է Պուշկինյան փողոցի վրա գտնվող առաքման զորանոցները։ Բանվորների երթը հետևում է բանտարկյալներին։ Առաքման զորանոցները հասնելով, ոստիկանությանը հաջողվում է խորամանկությամբ բանվորներից բանտարկել ևս 300 հոգու։ Երա վրա դրությունը էլ ավելի է սրվում։

Այդ ժամանակ ՌՍԴԲԿ Բաթումի Կոմիտեի որոշմամբ՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ ոտքի է կանգնում ամբողջ Բաթումի պրոլետարիատը։ Անձամբ ընկեր Ստալինի ձեռքով գրված բոցաշունչ կոչերը լայնորեն տարածվում են գործարաններում և բանվորական ավաններում, բանվորները ամբողջ գիշերը Բարձխանա, Զարբա, Գորոդոկ, Կախաբերի բանվորական թաղամասերում տենդագին պատրաստություն են տեսնում առավոտյան վիթխարի ցույց կազմակերպելու համար։

Մարտի 9-ին (նոր տոմարով 22-ին) ցույցի են դուրս գալիս Մանթաշևի, Ռոտշիլդի, Նոբելի, Ռիլսկի եղբայրների, Սիգերիդիսի, Խաչատուրովի, Պասեկայի, Կապլանի գործարանների բանվորները, Նավահանգստի բեռնակիրները, երկաթուղու և Բաթումի մյուս գործարանների բանվորներից շատերը՝ թվով 6 հազար հոգի, Բաթումը ընդգրկված էր Անդրկովկասի պատմության մեջ մինչև այդ չտեսնված ռևոլուցիոն ալեկոծությամբ։

---

[1] „Батумская демонстрация 1902 года". стр. 103—105.

Առավոտյան ժամը 8-ին, ցուցարարները մի քանի կարմիր դրոշակներով և ռևոլուցիոն երգերով, տարբեր լեզուներով «Կորչի ինքնակալությունը», «Կեցցե ազատությունը» բացականչություններով դիմում են դեպի առաքման զորանոցները և պահանջում են ոստիկանությունից՝ անմիջապես արձակել ձերբակալվածներին։

Ցուցարարների առջևից գնում էր ընկեր Ստալինը՝ առաջավոր բանվորների հետ միասին։ Զորանոցի մատույցներում «բազմությանն ընդառաջ ելած գնդապետ Դրյագինին՝ բանվորների բազմության գլուխ կանգնած Միխ. Խրիմյանցը և Թեոֆիլ Դոգիբերիձեն բազմության անունից հայտարարում են միևնույն պահանջը,—կարդում ենք լենինյան «Իսկրայում»—կամ ազատել ձերբակալվածներին, կամ թե ձերբակալել բոլորին։ Այս անգամ գնդապետն ի պատասխան հրամայում է ցրվել։ Որովհետև բազմությունը հրաժարվում է կատարել այդ հրամանը, Դրյագինը, բերդի այդտեղ կանգնած գումարտակի կոմանդան ուժեղացնելու համար, կանչում է Պավկասյան 7-րդ հրաձիգ գումարտակի մի վաշտ։ Զինվորների փորձին՝ հրապարակը մաքրել բանվորներից, վերջիններս պատասխանեցին քարերի տարափով։ Բանվորները փորձում էին զինվորների ձեռքից խլել հրացանները և լսվում էին այսպիսի աղաղակներ. «Խփիր դրանց, վերցրու հրացանները, նրանք չեն կարող կրակել»։ Հրապարակում եղած բանվորներին միացան փոխադրական բանտամասում գտնվող բանտարկյալները որոնք այնտեղից քարեր շպրտեցին և վերջում դուրս պրծան բանտի բակից։ Վերջում զինվորները սկսեցին կրակել և սպանեցին 14 (փաստորեն 15—Ե. Խ.) բանվոր ու վիրավորեցին շատերին»[1]։ Վիրավորների թիվը հասնում էր մինչև 54-ի, դա մի արյունահեղ գոտեմարտ էր, որի մեջ գահճի դեր խաղաց Բաթումի ցարական ադմինիստրացիան և զորքերի կրակը ղեկավարող գահիճ կապիտան Անտաձեն։

Ցուցարարները երկար ժամանակ անհողդողդ կռվում են համազարկերի ու գնդակների տարափի տակ։ Արյունլվա վիճակում ժանցու վերք ստացած բանվորները բռունցքները բարձրացնելով, գրոհում են կրակողների վրա և վրեժի կոչ անում ընկերներին։ Ցույցի և գնդակահարության ամբողջ ժամանակամիջոցում ընկեր Ստալինը գտնվում էր ալեկոծվող բանվորների հոծ մասսաների մեջ, ոգևորում և ղեկավարում էր նրանց շարժումը, օգնում էր վիրավորներին բազմության միջից դուրս բերելու, ոստիկանների հետապնդումից նրանց ազատելու համար։

Ցույցը ճնշվեց միայն կոպիտ ուժի ու զենքի գործադրումով։

Մարտի 9-ի երեկոյան սոցիալ-դեմոկրատական խմբակների ղեկավարները հավաքվում են ընկեր Ստալինի մոտ։ Նրանց հետ ունեցած զրույցի ժամանակ ընկեր Ստալինը ասում է. «Այսօր մենք առաջ անցանք մի քանի տարով»,—ինչպես այդ մասին հիշում են հին բանվորները։ Եվ իսկապես, այդ ցույցը շրջադարձային կետ հանդիսացավ Անդրկովկասի բանվորական ռևոլուցիոն շարժման մեջ։ Բաթումի պրոլետարիատը ընկեր Ստալինի ղեկավարությամբ կոփվեց և դարձավ համառուսական պրոլետարիատի ռևոլուցիոն

[1] „Искра" № 26, 1902 թ. հոկտեմբերի 15 (լենինյան «Իսկրան» 1902 թ. հունիսից մինչև 1903 թ. ապրիլ ամիսը 7 ծավալուն թղթակցություն է տպագրում Բաթումի Ս. Դ. կազմակերպության, գործադուլների ու ցույցերի մասին)։

ցանակի առաջավոր ջոկատներից մեկը: Ցույցի մասնակիցներից մեկը՝ Խաչատուրովի գործարանի բանվոր Հովակիմ Ինջորարյանը պատմում է. «Այս ցույցը, որ կազմակերպել ու ղեկավարում էր ընկեր Ստալինը, մի անգամ ևս համոզեց մեզ, որ ինքնակալության դեմ զենքը ձեռքին մղվող վճռական պայքարը միայն կհասցնի աշխատավորների հաղթանակին»[1]:

Մարտի 12-ին ընկեր Ստալինը կազմակերպում է զոհված բանվորների ռևոլուցիոն հուղարկավորությունը: Չնայած դեռ երեք օր առաջ էր տեղի ունեցել ցույցի գնդակոծումը, բայց և այնպես թաղմանը մասնակցելու են դուրս գալիս բանվորական հսկայական մասսաներ, որոնց առաջնորդում էր ընկեր Ստալինը: Թաղման օրը ընկեր Ստալինի գրած կոչերը տեղեկում են Բաթումի ամբողջ գործարանները, նրանք տարածվում են նաև Քութայիսի նահանգի գյուղերում, ալեկոծում են Ռուրիայի և մյուս շրջանների գյուղացիական ագրարային շարժումը: Այդ կոչերում մերկացնելով բանվոր դասակարգի անարգ դահիճներին, Բաթումի ցույցի գնդակահարողներին: Ընկեր Ստալինը կոչ է անում բանվորներին և աշխատավորներին՝ վճռական պայքարի դուրս գալ ցարական և բուրժուական կարգերի տապալման համար, սոցիալիզմի հաղթանակի համար:

Ռևոլուցիոն կրքով հագեցված ստալինյան այդ կոչերից մեկում կարդում ենք. «Փառք ձեզ, ճշմարտության համար սպանվածներիդ, փառք ձեզ սնած մայրական կրծքերին, փառք ձեզ փշե պսակով պսակվածներիդ, որ մեռնելիս դողդոջուն, գունատ շրթունքներով մեզ շշնջում էիք պայքարի մասին:

Փառք ձեր ստվերներին, որոնք անարգել շրջում են մեզ վրա և մեր ականջին շշնջում արյունով վրիժառու եղեք...»[2]:

* * *

Ընկեր Ստալինի գլխավորությամբ 1902 թվականին Բաթումի ռևոլուցիոն ելույթները սարսափի մեջ էին դրել ցարական իշխանությանը: Քութայիսի զինվորական նահանգապետը նույնիսկ ստիպված էր մեծ քանակությամբ կազակային զորամասեր պահել Բաթումում: Չնայած դրան, այնուամենայնիվ 1902 թվականի մարտից մինչև 1903 թ. մարտ ամիսը մեկ տարվա ընթացքում Բաթումում տեղի ունեցան ավելի քան 30 գործադուլներ, որոնք բոլորն էլ վերջացան բանվորների հաղթանակով:

Ոստիկանությունը և ժանդարմերիան ուժեղացնելով հետապնդումները, գործադուլավորներից և ցուցարարներից մոտ 500 հոգու ձերբակալելով արտաքսեցին Բաթումից դեպի իրենց ծննդավայրերը՝ Վրաստան, Հայաստան, Ադրբեջան և մյուս շրջանները: Այդ բանվորները ամբողջ երկրամասով մեկ ծավալելով ստալինյան իդեաները, ռևոլուցիոն լոզունգները, ալեկոծեցին և ոտքի հանեցին Անդրկովկասի բանվորներին և գյուղացիներին՝ ինքնակալության և բուրժուազիայի դեմ:

1902 թ. ապրիլի 5-ի (18-ին) գիշերը ցարական ոստիկանությանը հաջողվում է Բաթումի պարտիական ղեկավար խմբի անլեգալ ժողովում ձերբակալել ընկեր Ստալինին: Բայց բանտում անգամ ընկեր Ստալինը չի խզում իր կապերը ռևոլուցիոն աշխատանքից: Նա բանտից ղեկավարում

---

[1] „Батумская демонстрация 1902 года", стр. 127.

[2] Նույն տեղում, էջ 27, ընդգծումը մերն է—Ն. Խ.

և ուղղություն է տալիս սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին, բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն պայքարին։ Ցարական իշխանությունը, որը հատուկ հսկողության տակ էր պահում ընկեր Ստալինին, 1903 թ. աշնանը երեք տարով աքսոր է ուղարկում Արևելյան Սիբիր։

Ընկեր Ստալինի բանտում գտնվելու ժամանակամիջոցում ցարական կառավարությունը Բաքումում կազմակերպում է մարտի 9-ի ցույցի դեկավար 21 առաջավոր բանվորների դատավարությունը՝ մեղադրելով նրանց զինվորական մասերին դիմադրություն ցույց տալու մեջ։ Ընկեր Ստալինի ցուցումով հմտորեն կազմակերպվում է դատապաշտպանությունը, և լենինյան «Իսկրա»-յի կողմից ողջ Ռուսաստանում հասարակական կարծիքի ստեղծման շնորհիվ, հաջողվում է մեղադրյալների մեծ մասին արդարացնել, ցարական դատարանը կարողանում է միայն մի քանիսին կարճատև բանտարկության դատապարտել։

Այս խոշոր հաղթանակը զուգադիպում է Բաքումի մարտի 9-ի ցույցի առաջին տարեդարձին։ 1903 թվականի մարտի 9-ին Բաքումի բազմահազար բանվորները Ս՝արքսի, Էնգելսի պորտրեներով զարդարված կարմիր դրոշակներով նորից փողոց դուրս գալով, իրենց ուժերի մարտական սաուգատես են անում։ Բանվորների շարասյուները ռևոլուցիոն երգերով անցնում են այն բանտի մոտով, որտեղ բանտարկված էր իրենց ուսուցիչը՝ ընկեր Ստալինը։

Ցուցարարները անարգանքի սյունին են գամում ցարական ինքնակալությանը և բուրժուազիային։

Ընկեր Ստալինի գլխավորությամբ Բաքումի բանվորները քաղաքական պայքարի հսկայական ուղի անցան։ Նրանց ռևոլուցիոն ելույթները և մասնավորապես մարտի 9-ի ցույցը «... ալեկոծեց Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիական մասսաներին»[1], հուժկու արձագանք գտավ Ռուսաստանի շատ վայրերում՝ Օդեսայում, Եկատերինասլավում, Դոնի Ռոստովում և այլ վայրերում։

Այդ շարժումը ստացավ համաուսական քաղաքական նշանակություն։ Նա միջազգային բանվորական շարժման պատմության մեջ մտավ որպես պրոլետարիատի մղած ռևոլուցիոն պայքարի փայլուն օրինակներից մեկը։

---

[1] Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, 1946 թ., էջ 38։